

Քաղաքականի փորձառոտներ

Կանաչ Ակադեմիա 2018



Կանաչ Ակադեմիա

1980-ականների Կանաչների սոցիալական և քաղաքական կարճատև ակտիվությունը Հարավային Կովկասում մարտեց 1990-ականների խորը տնտեսական և քաղաքական ճգնաժամի հետևանքով: Այսօր Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հասարակությունը ոչ միայն չի վերադարձել Կանաչ փոխակերպման, այլ նաև բավարար չափով իրազեկված չէ և չի գիտակցում, թե որոնք կարող են լինել դրա օգուտները:

Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակը 10 տարուց ավելի՝ սկսած 2003 թվականից, հետևում է տարածաշրջանի սոցիալական և քաղաքական զարգացումներին և փորձում է Կանաչ քաղաքական դիսկուրսի զարգացման համար հենարան գտնել: Քաղաքի հանրային տարածքների պահպանմանը և արդյունաբերական տարածքներում շրջակա միջավայրի և մարդու իրավունքների հիմնախնդիրներին ուղղված երիտասարդական նախաձեռնություններն իրենցից հուսադրող միտում են ներկայացնում, որոնք աստիճանաբար Կանաչ պլատֆորմներ են ձևավորում քաղաքացիական ակտիվության համար: Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակը նախաձեռնել է Կանաչ Ակադեմիայի ծրագիրը՝ տարածաշրջանի սոցիալական և քաղաքական կյանքում այս խիստ էական և կարևոր սկզբնառությանն աջակցելու համար:

Կանաչ Ակադեմիայի Նպատակն Է՝

խթանել Հայաստանում քաղաքականության, սոցիալական կյանքի, տնտեսության և շրջակա միջավայրի հիմնահարցերի շուրջ քննարկումները Կանաչ քաղաքականության արժեքների և մտահղացումների շրջանակներում:

- ապահովել համընդհանուր հարթակ երիտասարդ ակտիվիստների, լրագրողների, գիտնականների և քաղաքական գործիչների համար՝ կայուն զարգացման կանոնակարգերի (մշակման հիմնախնդիրների շուրջ շփման և համագործակցության) համար:
խրախուսել շարունակականություն ապահովող կանաչ քաղաքականության սկզբունքներն ու արժեքները՝ Հայաստանի տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացումներին վերաբերող՝ այդ թվում՝ գենդերային ժողովրդավարության և անցյալին անդրադառնալու հարցերում:
- խթանել հանրային քննարկումներ վերոնշյալ սկզբունքների և արժեքների շուրջ:
- Կայուն զարգացման սկզբունքների վրա հիմնված այլընտրանքային կանոնակարգերի տեսլականների և մոտեցումների մշակման համար ստեղծել հարթակ՝ Հարավային Կովկասի սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրները լուծելու նպատակով:
- միջազգային շահագրգիռ կողմերի հետ համագործակցելով՝ գիտահեն կանոնակարգերի մոտեցումների (հետազոտությունների և մասնագիտական հմտությունների զարգացման օգնությամբ) և փորձի փոխանակման միջոցով հզորացնել երկրի ներքին դերակատարներին:

Ակադեմիայի շրջականում մասնակիցները կիրավորվեն քաղաքական խնդիրների և սոցիալական փոխակերպումների միջև կապերի շուրջ խորհելու և դրանք ուսումնասիրելու՝ Կանաչների համաշխարհային փոխակերպման օրակարգին ավելի լավ ծանոթանալուն պատակով: Նրանց կառաջարկվի ուսումնասիրել այն հարցը, թե ինչպես կարող են զարգանալ հանրային և տնտեսական հարաբերությունները Հայաստանում և Հարավային Կովկասում՝ կայուն զարգացում ապահովելու համար:

**Հայնրիխ Բյոլ հիմնադրամի
Հարավային Կովկասի գրասենյակ**

Քաղաքականի փորձԱՌՈՒՄԸ

Հայաստանի թավշյա հեղափոխությունը մեկ անգամ ևս փաստեց, որ քաղաքականությունը կեցության նոր կերպերի հայտնագործման միջոց է, որ այն ոչ միայն աշխարհագործման, արարման, նորի հիմնադրման ու կենսագործման գործիք է, այլև իր շրջանը երբեք չփակող մի բաց տիրույթ, որից ներս գույների ողջ ներկայանակով դրսևորվում են մարդու՝ մարդ լինելու հատկանիշները: Այս փորձառությունը նաև ցույց տվեց, որ քաղաքականի գոյության նախապայմանը ազատության գոյությունն է, ինչպես նաև մարդու՝ հնարավորությունների շտեմարան լինելու հանգամանքը, քանզի մարդկային ազատության ու հավասարության բացակայությունը անհնարին կդարձնեք մարդկային գործունեությունը՝ ձեռնարկելու, որոշում կայացնելու, առհասարակ՝ հարաբերվելու նրա կարողությունը: Հեղափոխությունը նաև ցույց տվեց, որ քաղաքականի մասին ոչ միայն հարկ է խոսել, ինչ է քաղաքականությունը» եզակի թվով դրված հարցով (ինչպես դա արվել է ավանդաբար՝ քաղաքականը նույնացնելով մեկ կառավարման արվեստի, մեկ հանրային (այլ ոչ՝ մասնավոր) գործերի, մեկ փոխզիջումների ու փոխհամաձայնության գործելակերպի, մեկ հանուն իշխանության մղվող պայքարի հետ), այլ հոգնակիով՝ ինչպիսիք քաղաքականություններով» է կարելի բաց պահել մարդու լինելիության հնարավորությունը, նպաստել նրան, որ մարդը միշտ ու անարգել ստանձնի ու իրացնի իր գոյությունը գոյության նոր հնարավորությունների վերածելու հանձնառությունը:

Քաղաքական մտքի այս քաղաքականությամբ ոչ միայն կարելի է վերաիմաստավորել քաղաքականն ու այն ներկայացնել դրական լույսի ներքո (հակառակ ընդունված բացասական՝ քաղաքականությունը կեղտոտ ոլորտ համարելու արմատացած պատկերացմանը), այլև քաղաքականը նույնացնել փոփոխության շարժառը լինելու հետ: Եթե կա հանրային նշանակության որևէ խնդիր ու անհամաձայնություն՝ այդ խնդրի շուրջ, եթե ծագել են հավաքական որոշումներ կայացնելու դժվարություններ կամ մտավախություն առ այն, որ խարխուլվել են արդարության հիմքերը, եթե դրվել է ,ո՛վ, ի՞նչ ու ինչպե՞ս պետք է մասնակցի», «ո՛վ, ի՞նչ ու ինչպե՞ս կշահի» և/կամ ,ո՛վ, ո՞ւմ ու ինչպե՞ս է ենթարկում ճնշումների» ու նմանատիպ այլ հարցեր, ապա, ինչ խոսք, մենք գործ ունենք

քաղաքականության հետ, ինչպես նաև քաղաքականի փորձ-առման հետ, այն է՝ այդ փորձի առման՝ նշանակության, դրա նվաճման և, վերջապես, այն փորձառելու հետ:

Հարցերի հենց այսպիսի՝ քաղաքականի փորձ-առում ենթադրող խումբ է ընտրվել Հայաստանի Կանաչ ակադեմիայի երկրորդ հավաքի համար, հարցեր, որոնք ոչ միայն կանաչական դիսկուրսի՝ թեմատիկ հիմնասյուններից են՝ բնապահպանություն, գենդերային դեմոկրատիա, հակամարտությունների կարգավորում, այլև արդիական և հրատապ խնդիրներ են հայ հասարակության համար: Հույս ունենք, որ խնդրո առարկա հարցերի քննությունը ոչ միայն կհարստացնի Ակադեմիայի մասնակիցների ներհայեցողական կյանքը (*vita contemplativa* (լատ.)), այլև կնպաստի նրանց գործուն կյանքին (*vita activa* (լատ.)), այն է՝ մասնակիցների համար խթան կդառնա՝ ստանձնելու իրենց բաժին իրազեկ պատասխանատվությունը գետեղված խնդիրների լուծման հարցում:

Աննա Ժամակոջյան
Դավիթ Իսաջանյան
Օլյա Ազատյան



1. Այստեղ «կանաչը» պետք է հասկանալ բառի ոչ թե նեղ, այլ լայն՝ վերջին հարյուրամյակի ընթացքում ընդլայնված ու խորացված իմաստով: «Կանաչական» քաղաքականությունը, որը սովորաբար նույնացնում են բնապահպանական խնդիրների հետ, այսօր կապվում է կայուն զարգացման հետ, որտեղ «կայունը» ոչ միայն վերաբերում է մարդ և բնություն, մարդ և մոլորակ փոխհարաբերություններին, այլև նրան, թե որքանով են ներդաշնակ մարդ-մարդ, մարդ-հասարակություն, մարդ և քաղաքական հաստատություններ, մարդ և մշակութային նորմեր փոխառնչությունները:

ԹԵՄԱ 1



ՎԱՆԱԶ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄ

■ **Սեպտեմբեր 28**

10:00 Կանաչ ակադեմիայի բացման խոսք

Օլյա Ազատյան, Թամար Անթիձե

10:30 Ծանոթություն

11:30 Սուրճի ընդմիջում

11:45 Կանաչ փոխակերպման քաղաքականությունը

Թամար Անթիձե

12:20 Կանաչ փոխակերպում, իրականություն, թե՛ ուտոպիա

Օլյա Ազատյան

13:00 Ճաշի ընդմիջում

14:00 Համաշխարհային և տեղական բնապահպանական մարտահրավերները

Ալեն Ամիրխանյան

16:00 Սուրճի ընդմիջում

16:15 Այլընտրանքային էներգիայի աղբյուրներ

Աստղինե Պասոյան

18:00 Ամփոփում և գնահատում

18:30 Ընթրիք Այնթափում

■ **Սեպտեմբեր 29**

10:00 Նեոլիթերալ հեգեմոնիա, դրա միջազգային ու հայաստանյան դրսևորումները

Վահրամ Սողոմոնյան

11:30 Սուրճի ընդմիջում

11:45 Կանաչ նեոլիթերալիզմ

Աննա Շահնազարյան

13:30 Ճաշի ընդմիջում

14:30 Անպատասխանատու հանքարդյունաբերություն. Ամուլսարի ոսկու պատմությունը

Հայկական բնապահպանական ճակատ

16:00 Սուրճի ընդմիջում

16:15 Կանաչ վարժություն

Կարեն Հակոբյան

17:30 Բնապահպանական կառավարման խնդիրները հետհեղափոխական անցումային շրջանում

Արթուր Գրիգորյան

18:15 Ամփոփում և գնահատում

18:45 Ավարտ

Համաշխարհային և տեղական բնապահպանական մարտահրավերները. Ալեն Ամիրխանյան

Համառոտագիր

Ինչպես ենք մենք ներազդում մեր մոլորակի վրա: Հատկապես մարդու ճիշտ գործունեությունն է պատասխանատու նման ազդեցության համար: Արդյո՞ք նման ազդեցությունները կխաթարեն մարդու առողջությունը և ապագա սերունդների՝ հավասարապես բարգավաճելու կարողությունը: Այս հիմնական հարցերն են քննարկվելու այս բաժնում: Ի լրումն՝ կդիտարկենք մի շարք ուղիներ, որոնցով մարդկությանը փորձում է դիմակայել այս մարտահրավերներին:

Կենսագրական

Ալեն Ամիրխանյանը Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրենն է 2013 թվականից ի վեր: 2014-ին նա հիմնեց ՀԱՀ-ի պատասխանատու հանքարդյունահանման կենտրոնը և զբաղեցնում է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը: Նախքան ՀԱՀ տեղափոխվելը Ալեն Ամիրխանյանը եղել է Մայքլ Փորթերի «Նախաձեռնություն հանուն մրցունակ ներքին քաղաքի» կազմակերպության հետազոտությունների գծով ավագ փոխնախագահը: Խորհրդատվական ծառայություններ է մատուցել Համաշխարհային բանկին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրին և Brookings Institution հետազոտական խմբին էներգետիկ արդյունավետության, ինչպես նաև տնտեսական և քաղաքային զարգացման հարցերի վերաբերյալ: Ներկայումս նրա ակադեմիական հետաքրքրությունները ներառում են քաղաքային տարածքների բնապահպանական կայունությունը, արհեստական միջավայրի «կանաչապատումը» և շրջանաձև տնտեսությունը, քանի որ այն առնչվում է քաղաքների «կանաչապատման» հետ: Ալենն ունի մագիստրոսի աստիճան քաղաքաշինություն մասնագիտացմամբ (1997)՝ ավարտելով Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի քաղաքային ուսումնասիրությունների և նախագծման ֆակուլտետը:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրներ. Աստղինե Պասոյան

Համառոտագիր

Հայաստանն ունի հարուստ բնական միջավայր: Երկիրը գտնվում է երեսուներկու կենսաբազմազանություններից երկուսի կիզակետում (Կովկասյան և Իրանա-Անատոլիական), որոնք աշխարհում սահմանել է Բնության պահպանության միջազգային միությունը (ԲՊՀՄ): Այն ոչ միայն հարուստ է տեսակների, այլև էկոհամակարգերի բազմազանությամբ (կիսաչոր տարածքներից մինչև ալպյան մարգագետիններ և անտառներ): Երկրի որոշ տարածքներ հարուստ են նաև ջրային ռեսուրսներով, որտեղ Սևանա լիճը համարվում է տարածաշրջանի քաղցրահամ ջրի ամենամեծ պաշարը: Այս էկոհամակարգերի վրա նշանակալից են տեղական և համաշխարհային ճնշումները: Այս բաժնում կքննարկվեն Հայաստանի բնական միջավայրի վրա ներկայիս ճնշումներն ու դեգրադացիայի կանխարգելման և վերականգնման խթանման հնարավոր ուղիները:

Կենսագրական

Աստղինե Պասոյանը էներգաարդյունավետության ոլորտի փորձագետ է, փորձառու ծրագրերի կառավարիչ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ-ում էներգաարդյունավետության ոլորտի քաղաքականության ջատագով՝ ավելի քան քսանամյա փորձառությամբ: Վերջին տասնամյակում տիկին Պասոյանը ղեկավարել է էներգետիկ արդյունավետության (EE) պլանավորման և իրավական բարեփոխումների ծրագրեր, տնտեսության տարբեր ոլորտներում էներգախնայողության և արդյունավետության խթանման ներուժի բացահայտման և շուկայական գնահատման, կառավարման կարողությունների զարգացման, էներգաարդյունավետության ոլորտում ներդրումների իրականացման ֆինանսավորման սխեմաների մշակման, կլիմայի փոփոխության մեղմացման ներուժի և անցումային շրջանում գտնվող մի շարք երկրներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ներդրումային միջավայրի վերլուծության, էներգետիկ սերտիֆիկացման և մակնշման քաղաքականության մշակման, բնակարանային և հանրային շենքերում էներգաարդյունավետության

խրախուսման, ազգային և քաղաքային էներգետիկ պլանավորման և հանրային իրազեկման գործողությունները:

Նեոլիբերալ հեգեմոնիա, դրա միջազգային ու հայաստանյան դրսևորումները. Վահրամ Սողոմոնյան

Համառոտագիր

Նեոլիբերալ պարադիգմի դրսևորումներն աշխարհում և Հայաստանում. Հանգուցալուծման հեռանկարներ. 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը գլոբալ մակարդակում առայժմ իր հանգուցալուծմանը չի հասել: Նեոլիբերալ պարադիգմերի ազատականացման, մասնավորեցման և ապակարգավորման ճգնաժամի պատասխանը տարբեր երկրներում արտահայտվում է խստամբերության կամ կոշտ խնայողության քաղաքականությամբ: Մյուս կողմից սրվում է սոցիալական բևեռացումը անգամ արդյունաբերական երկրներում: Նման իրավիճակը քաղաքականության մեջ ավտորիտար միտումներ է առաջ բերում: Թեմայի շրջանակում կփորձենք քննարկել նեոլիբերալ հեգեմոնիայի ճգնաժամի դրսևորումներն աշխարհում և Հայաստանում, ինչպես նաև դրա հանգուցալուծման հեռանկարները:

Կենսագրական

Վահրամ Սողոմոնյանը Քաղաքական դիսկուրս (diskurs.am) հանդեսի խմբագրակազմի անդամ է: 2007-ին պաշտպանել է քաղաքագիտական դոկտորական աշխատանք Մարբուրգի Ֆիլիպս համալսարանում: 2002-ից 2006 թվականներին աշխատել է նույն համալսարանի «Եվրոպական ինտեգրացիա» հետազոտական խմբում: Գրել է գիտական աշխատանքներ ինտեգրացիոն գործընթացների, արժեհամակարգային հարցերի և Արցախի հիմնախնդրի մասին: 1999 -ին ավարտել է ԵՊՀ գերմաներենի բաժինը: 2010-ից ի վեր մասնակցել է մի շարք քաղաքացիական նախաձեռնությունների (այդ թվում Մաշտոցի պուրակի շարժմանը): 2017թ. ապրիլից Կրթական քաղաքացիական նախաձեռնության անդամ է:

Կանաչ Նեոլիբերալիզմ. Աննա Շահնազարյան

Համառոտագիր

Մենք ապրում ենք գլոբալացված ֆինանսականացված աշխարհում, որտեղ պետության դերը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի և ներպետական կարգավորիչ հեղինակության, նվազ է կամ միտում ունի էլ ավելի նվազեցվել: Որպես կանոն, պետության սահմանած նորմատիվ կարգավորումները համարվում են տվյալ ոլորտում հեղինակություն: Ոչ պետական հեղինակություն կարող են վայելել պետությունից դուրս գտնվող սուբյեկտներ՝ կոմերցիոն կամ քաղաքացիական ասոցիացիաներ, ստանդարտավորման կամ ռեյտինգային կազմակերպություններ, նույնիսկ՝ արհմիություններ, որոնք օգտագործում են ոչ պետական կարգավորումներ և ունեն յուրահատուկ ,օրինականություն»: Ներկայիս գլոբալացված շուկայական աշխարհում շուկայի ինքնակարգավորման սկզբունքները ներթափանցել են հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտները, ու առաջացել են պետության կարգավորիչ դաշտին զուգահեռ կամ հաճախ՝ դրանից վեր գործող ,ինքնակարգավորիչ» համակարգեր, այսինքն՝ հանրային կյանքի կարգավորման մասնավոր ձևեր: Ըստ էության՝ օրենսդրական կարգավորման ու հեղինակության տեղափոխություն է տեղի ունեցել հանրային կարգավորիչ դաշտից դեպի մասնավոր հեղինակության դաշտ: Հանդիպմանը քննարկելու ենք ,կանաչ» ինքնակարգավորիչ պիտակի սփռման և վերը նշված՝ հանրային կարգավորիչ դաշտի քայքայման խնդիրները:

Կենսագրական

Աննա Շահնազարյանը բնության պահպանության ջատագով է, ունի միջազգային դոկտոր կազմակերպությունների հետ աշխատելու տարիների փորձ, ակադեմիական ուսումնական փորձ՝ զարգացման ոլորտում, և այս երկու փորձերի շնորհիվ կարողանում է անմիջականորեն նկատել միջազգային օգնության օրակարգը գլոբալ նեոլիբերալ քաղաքականության մեջ: Աննան քաղաքացիական ակտիվիստ է, նշանակություն է տալիս փոխհատվող ֆեմինիզմի, սոցիալական արդարության, բնության պահպանության ու հանրային տարածքների հարցերին:

Անպատասխանատու հանքարդյունաբերություն. Ամուլսարի ոսկու պատմությունը. Հայկական բնապահպանական ճակատ

Համառոտագիր

2007 թվականից Հայաստանի կառավարությունը հանքարդյունաբերությունը ճանաչեց որպես գերակա տնտեսական ճյուղ և ամեն տիպի արտոնություններ տալով այդ ոլորտին՝ մինչև օրս նպաստում է դրա ընդլայնմանը՝ ի հաշիվ գյուղատնտեսության, տուրիզմի, ապրող էկոհամակարգերի և բնակիչների առողջության: «Պատասխանատու հանքարդյունաբերություն» անվան տակ է փորձում ներկայանալ նաև Լիդիան ընկերությունը, որը Ջերմուկից շուրջ 10 կմ հեռավորության վրա (մոտավորապես նույնը, ինչ Երևանում 7-րդ Մասիվից մինչև Կենտրոն տարածությունն է) ոսկու հանք շահագործելու ծրագիր է մշակել: Ովքեր են այս հանքի հետևում կանգնած մարդիկ ու ընկերությունները: Ինչ դեր է ստանձնել ՀՀ կառավարությունը: Ինչո՞ւ են մասնագետներն ու բնապահպաններն այսքան մտահոգ: Ինչ կարող է պատահել Հայաստանի ջրերի հետ: Ո՞րտեղից է գալու ցիանիդը, և ինչ է լինելու ուրանի հետ: Ինչ պայքար է ծավալվում, և ինչ կարող ենք անել մենք:

Հայկական բնապահպանական ճակատ

ՀԲԾ-ի նպատակն է մեր բնության պահպանությունը, ինչպես նաև սոցիալական արդարության ապահովումը բնության հետ ներդաշնակ զարգացման միջոցով: Այս նպատակներին հասնելու համար ՀԲԾ-ն հետամուտ է, որպեսզի համապատասխան պետական մարմինները իրենց գործառույթները լիարժեք իրականացնեն մասնավորապես բնության պահպանման և վերականգնման ասպարեզում: ՀԲԾ-ն նաև հետամուտ է բնական պաշարների ողջամիտ օգտագործման և վերարտադրության, բնական միջավայրի վրա տնտեսական և այլ գործունեության բացասական հետևանքների կանխման և վերացման, ինչպես նաև սոցիալական արդարության սկզբունքով բնական պաշարների օգտագործման արդյունքների բաշխման ուղղությամբ: Այդ նպատակների իրականացման համար ՀԲԾ-ն ձևավորում է բնապահպանական մշտադիտարկման և գործողությունների կազմակերպման ու համակարգման համահայկական ցանց, որը կգործի օրինականության,

թափանցիկության, հաշվետվողականության և բանականության սկզբունքներով:

Բնապահպանական կառավարման խնդիրները հետհեղափոխական անցումային շրջանում. Արթուր Գրիգորյան

Կենսագրական

Արթուր Գրիգորյանը բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարն է: Նա սովորել է Երևանի պետական համալսարանում, ունի իրավաբանի կրթություն: Մոտ ութ տարի աշխատում է էկոլոգիական իրավունքի ոլորտում, հանդիսանում է «Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպության ղեկավարը: Այսօրվա վայրենի հանքարդյունաբերությունը համարելով Հայաստանի սոցիալական և էկոլոգիական հիմնական խնդիր՝ զբաղվում է գերազանցապես այդ ոլորտին առնչվող հարցերով: Բնառեսուրսային տնտեսությանը տնտեսական այլընտրանք առաջարկելու համար 2015 թվականից մշտական բնակություն է հաստատել Հայաստանի հեռավոր գյուղերից մեկում՝ Կալավանում, և տեղի բնակչության հետ միասին փորձում է հիմնել կանաչ տնտեսության ոլորտին բնորոշ բիզնեսի տարբեր տեսակներ (հյուրատնային փոքր բիզնեսներ, օրգանական արտադրություն և այլն):

Կանաչ վարժություն. Կարեն Հակոբյան

Կենսագրական

Կարեն Հակոբյանը երաժիշտ է և հետազոտող, ինչպես նաև՝ մարդու իրավունքների ջատագով և ուսուցանող, ապրում է Նյու Յորքում: Ներկայում նա «Հույս» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահն է Հայաստանում: Կարենը աշխարհի տարբեր վայրերում դասախոսում է քաղաքականության և արվեստի արդի խնդիրների մասին: Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում նա աշխատել է «Ազգային մենթալիտետը քաղաքական որոշումների կայացման և վարչարարության գործում» թեմայով դիսերտացիայի վրա: Ավարտել է Երևանի պետական համալսարանը, Սանկտ Պետերբուրգի Քաղաքացիական ծառայության ակադեմիան, և Թվենթե համալսարանը՝ Նիդերլանդներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՏԵՐԱԶՄԻ



ԹԵՄԱ 2

■ Հոկտեմբեր 13

11:30 Սուրճի ընդմիջում

12:00 Բացման խոսք.

Լիլիա Զիկլաձե, ծրագրի համակարգող (Վրաստան)

12:15 «Պատերազմի և խաղաղության հարցը քաղաքաշինության²
նախաշենին»

Բանախոս՝ Դավիթ Իսաջանյան

13:30 Ճաշի ընդմիջում

14:30 Պատերազմի և խաղաղության հարցը 19-րդ դարի
անպատերազմ համատեքստում

Բանախոս՝ Դավիթ Իսաջանյան

15:45 Սուրճի ընդմիջում

16:15 Պատերազմի և խաղաղության հարցն Առաջին
աշխարհամարտի հետշփոթին»

Բանախոս՝ Դավիթ Իսաջանյան

17:30 Ավարտ

■ Հոկտեմբեր 14

10:30 «Ինչո՞ւ կոնֆլիկտը կանաչ չի լինում»

Բանախոս՝ Օլյա Ազատյան

11:15 Սուրճի ընդմիջում

11:30 «Պատերազմի և խաղաղության հարցը և
սառըպատերազմական աշխարհակարգը

Բանախոս՝ Դավիթ Իսաջանյան

13:00 Ճաշի ընդմիջում

14:00 «Պատերազմի և խաղաղության հարցը հետարդի հոլովույթում
(ուշ 20-րդ դար)

Բանախոս՝ Դավիթ Իսաջանյան

15:15 Սուրճի ընդմիջում



2. Քաղաքական արդիություն՝ մոդեռնիզմ: Քաղաքական մեկնարկը սովորաբար կապում էն ազգային պետությունների առաջացման հետ:

15:30 Պատերազմի և խաղաղության հարցը և այժմեության գերակա հայեցակարգերը

Բանախոս՝ Դավիթ Իսաջանյան

16:45 Սուրճի ընդմիջում

17:00 Քաղաքացիական հասարակություն և խաղաղաշինություն. առասպել և իրականություն

Բանախոս՝ Էդգար Խաչատրյան

18:15 Ավարտ

Դատերազմի և խաղաղության միջազգայնագիտական տեսություններ. Դավիթ Իսաջանյան

Համառոտագիր

Դասախոսությունը նվիրված է պատերազմի և խաղաղության միջազգայնագիտական տեսությունների քննությանը: Համառոտ, բայց համկողմանի պատկեր ստեղծելու նկատառմամբ դասախոսությունն ուրվագրելու է պատերազմի և խաղաղության իրապաշտական (ռեալիզմ), նորիրապաշտական (նեոռեալիզմ), նորդասական, գերիշխանական, ազատական (լիբերալ), ժողովրդավարական, տնտեսական, կերտվածապաշտական (կոնստրուկտիվիզմ) տեսությունների հիմնական դրույթները՝ անդրադառնալով նաև ոլորտում կիրառվող եզրաբանությանը, պատերազմի ծագման և խաղաղության հաստատման՝ տեսություններից յուրաքանչյուրի առաջարկած պատճառներին և նրան, թե՛ որ պայմանում ինչպիսի ելք կարելի է ակնկալել: Դասախոսությունը եզրափակվելու է պատերազմի բնույթի մեթոդային միջպետական պատերազմից քաղաքացիական և ահաբեկչական պատերազմի անցմամբ դրսևորվող փոփոխությունների վերլուծությամբ:

Կենսագրական

Դավիթ Իսաջանյանը Բրեմենի Յակոբզի անվան միջազգային համալսարանի և Բրեմենի համալսարանի զուգավար շրջանավարտ է, որտեղ ստացել է միջազգային հարաբերությունների, համաշխարհային կառավարման և հասարակագիտության տեսության միջգիտակարգային կրթություն: Ուսանել է նաև Երևանի պետական, Փոնսիլվանիայի, Ալաբամայի՝ Հանթսվիլի համալսարաններում: Նրա գիտական քննասիրության կենտրոնում Եվրամիության՝ որպես նորահայտ ու նորօրինակ դերակատարի արտաքին քաղաքական հայեցակարգի քննությունն է՝ ինքնութաբանության և ,անվտանգության» հետարդի բանադատական տեսությունների համատեքստում: Դավիթ Իսաջանյանն աշխատում է Հայաստանի ամերիկյան համալսարանում, որտեղ դասավանդում է թարգմանության և բանավոր թարգմանության տեսություն և պրակտիկա: Նրա վերջին տպագիր աշխատանքը ,Հետքերով որբերի հայոց. Ամերիկյան

նպաստամատույց կոմիտեի մարդասիրական առաքելությունը ըստ Ռոքֆելերի արխիվային կենտրոնի լուսանկարների»՝ երկլեզու՝ հայերեն և անգլերեն, գրքույկն է, որում նա ուրվագրում է ամերիկյան միսիոներական շարժումների և օտարաշխարհիկ մարդասիրության պատմությունը: Վերջերս թարգմանել է գլուխներ Ֆրիդրիխ ֆոն Հայեկի ,Ճանապարհ դեպի ճորտություն» և Ջոն Մեյնարդ Բեյնսի ,Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատություններից:

Քաղաքացիական հասարակություն և խաղաղաշինություն. Առասպել և իրականություն. Էդգար Խաչատրյան

Համառոտագիր

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության նախաձեռնությունների օրինակով կփորձի վեր հանել հակամարտություններում ներգրավված տարածաշրջաններում քաղաքացիական հասարակության խաղաղաշինական նախաձեռնությունների հնարավորություններն ու սահմանափակումները: Ինտերակտիվ քննարկման միջոցով մասնակիցները կփորձեն գտնել պատասխաններ հետևալ հարցերին. Հարավային Կովկասի տարածաշրջանում գոյություն ունեցող էթնօքաղաքական կոնֆլիկտների համատեքստում ինչ ենք հասկանում խաղաղաշինություն բառիներքո: Ո՞րն է տարածաշրջանում գոյություն ունեցող էթնօքաղաքական կոնֆլիկտների խաղաղ կարգավորման գործընթացներում քաղաքացիական հասարակության դերը: Ո՞ր խնդիրների լուծմանն են ուղղված քաղաքացիական հասարակության խաղաղաշինական նախաձեռնությունները:

Կենսագրական

Էդգար Խաչատրյանը ,Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահն է: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված նախաձեռնություններ իրականացնող եվրոպական հկների համագործակցության EPNK նախագծի շրջանակներում ,Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» (CMI) ֆիննական ոչ կառավարական կազմակերպության փորձագետ-խորհրդատու,

ինչպես նաև Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի, կանխարգելման
և հետկոնֆլիկտային կարգավորման թեմաներով դասընթացավար:

ԳԵՆ/ԴԵՐԱՅԻՆ ՀՈԼՈԿՈՒՄԵՐ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԱՅՓՄԵՈՒԹՅԱՆԸ, ՏԵՄՈՒԹՅԱՆ
ՈՒ ԱՌՕՐԵՈՒԹՅԱՆԸ ԴԵՄ ՀԱՆԴԻՄԱՆ



■ Նոյեմբեր 17

10:00 Ինչո՞ւ գեն/դեր: Առօրեականություն և իշխանություն: Ինչպե՞ս վերհանել գենդերային քաղաքականությունները. աշխատարան

Աննա ժամակոչյան

11:00 Սուրճի ընդմիջում

11:15 Սեռականության շուրջ նարատիվները պատմական և գրական տեքստերում. Հայաստանի հին շրջանն ու միջնադարը.

Փաննա Անդրեասյան

Գենդերի և սեռականության պատումները հայագիր միջնադարյան գրվածքներում և «Կնոջ հարցի» երևան գալը արդի գրականության մեջ.

Արփի Մանուսյան

13:00 Ճաշի ընդմիջում

14:00 Գենդեր և ֆեմինիզմ. հիմնական հասկացություններ և տեսություններ

Գոհար Շահնազարյան

15:45 Սուրճի ընդմիջում

16:00 Ռեակցիոնիստական գաղափարախոսություններ. «հայեցի» կնոջ և «զինվորի մոր» կերտումը.

Լարա Ահարոնյան

16:45 Ընդմիջում

17:00 Կնոջ քաղաքական ուղին. գրույց ԱԺ 6-րդ գումարման պատգամավոր Լենա Նազարյանի հետ

■ Նոյեմբեր 18

10:00 Կանանց արվեստն ընդդեմ ֆեմինիստական արվեստի. Տիպաբանությունները և հակասությունները Հայաստանի արվեստի պրակտիկաներում.

Սուսաննա Գյուլամիրյան

11:00 Սուրճի ընդմիջում

11:15 Սեռականության իրավական, կրոնական և սովորութային կարգավորումները Արևելահայաստանում, քննարկում.

Հրաչյա Հակոբյան, Մարիամ Խալաթյան, Էդուարդ Դանիելյան

13:00 Ճաշի ընդմիջում

14:00 Գենդեր-մարմին. աշխատարան

Կարեն Հակոբյան

15:00 Սեռականություն և «ազգային» սահման(ափակում)ներ.
հավասարության հաստատման պրակտիկաները
Հայաստանում և հակախտրականության օրենքը

Մամիկոն Հովսեփյան

15:50 Սուրճի ընդմիջում

16:00 Սովորույթների փոխարկումն այսօր՝ միջամտությամբ
Ժամանակակից արվեստի, պերֆորմատիվ ակտիվիզմի և
հարցադրող հետազոտությունների

Գայանե Շագոյան, Արմինե Հովհաննիսյան

18:00 Ամփոփում

Սեռականության շուրջ նարատիվները պատմական և գրական տեքստերում. Հայաստանի հին շրջանն ու միջնադարը. Ժաննա Անդրեասյան

Համառոտագիր

Գրականության և սեռականության փոխառնչությունը բարդ է և խճողված: Հայոց պատմության հնագույն շրջանում և միջնադարում, հատկապես վաղ միջնադարում, գրավոր խոսքը, մասնավորաբար, երբ դիտարկում ենք պահպանված-մեզ հասած տեքստերը, իշխանական է: Ուստի անդրադարձը սեռականությանը ու դրա մեկնաբանության ձևերը առավելապես ժամանակի իշխանության դիրքից տրվող գնահատականներ են: Տևական ժամանակ սեռականության մասին խոսքը, դրա գրավոր սահմանումն ու ձևակերպումն իրականացրել է Հայոց առաքելական եկեղեցին՝ պայմանավորելով սեռականության հանդեպ կոնկրետ դիրք՝ մարմնականի ճնշման և հաղթահարման անհրաժեշտությունը: Ի մասնավորի՝ հին և միջնադարյան պատմական և գրական տեքստերի ուսումնասիրությունը երեք հանգուցային նարատիվներ է հայտնաբերում, որոնցից յուրաքանչյուրը ինչպես կապված է նախորդ նարատիվին, այնպես էլ խզում է նախորդի հետ՝ իշխանական պայքարի տրամաբանությամբ: Այս նարատիվները, հետևաբար, միայն պատմական չեն: Դրանք պատմականության շղարշի տակ վերասահմանվում են իբրև ժամանակակից տեքստեր՝ շաղկապվելով ներկայի իշխանությանն ու քաղաքականությանը, և պատմականությունն օգտագործելով իբրև լեգիտիմության նոր աղբյուր:

Կենսագրական

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու է: Ավարատել է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետը: Դասավանդում է Երևանի պետական և Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարաններում: Զբաղվում է հետխորհրդային Հայաստանի հասարակական հիմնախդիրների ուսումնասիրությամբ: Գիտական հետազոտությունների շրժագիծն ընդգրկում է նաև սոցիոլոգիական մեթոդաբանության համապատասխանության և սոցիալական ցանցերի որակական բնութագրիչների ուսումնասիրությունները:

Գեների և սեռականության պատումները հայագիր միջնադարյան գրվածքներում և «Կնոջ հարցի» Երևան գալը արդի գրականության մեջ. Արփի Մանուսյան

Համառտագիր

Ինչպե՞ս է սահմանվում սեռականությունը կոնկրետ սոցիալ-պատմական ժամանակաշրջանում և ուսումնասիրվող նյութի համատեքստում հետազոտական հարցը 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ գեղարվեստական-հրապարակախոսական գրականության առումով ներկայանում է ուրույն անկյան տակ՝ հանգելով «ինչ է կամ ի՞նչ է հայ կնոջ խնդիրն ու նրա ազատագրության հրամայականը» հարցերի ուսումնասիրությանը: 19-րդ դարի կեսերից արևելահայ լուսավորական գրող-հրապարակախոսների ստեղծագործություններում առանցքային է դառնում հայ կանանց դաստիարակության և կրթության վատթար դրության հարցը: Քրիստոնեական բարոյականության և եվրոպական լուսավորական կրթության ազգայնացված, տեղայնացված առանձնահատուկ նախագիծն էր, որ ըստ լուսավորական գործիչների, պիտի ազատագրեր հայ կանանց նահապետականության և «ստրկության» այս դարավոր լծից: Կրթության եվրոպական լուսավորական մոդելով, բայց ազգային առանձնահատկությամբ՝ նախագծի առանցքում լեզվի հարցն էր՝ աշխարհաբար արևելահայերենով դասավանդումը, գրականության արտադրությունն ու ընթերցասիրության սերմանումը:

Կենսագրական

Արփի Մանուսյանը սոցիոլոգիայի մագիստրոսի աստիճան է ստացել Երևանի պետական համալսարանում 2012-ին: 2008-ից ներգրավված է «Սոցիոսկոպ» հետազոտական ՀԿ ծրագրերում իբրև հետազոտող: Հայաստանում տեղի ունեցող հանրային շարժումները և դիմադրությունները, տեղի հասարակագիտական մտքի պատմությունը և սեռականության հարցերը նրա հիմնական մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն են: Երկար տարիներ ուսումնասիրել է մարդու իրավունքների, քաղաքացիական շարժումների և քաղաքական գաղափարների շուրջ դիսկուրսները մեդիայում: 2015-ից անդամակցում է և ներգրավված է Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների

ինստիտուտի աշխատանքներում:

Գենդեր և ֆեմինիզմ. հիմնական հասկացություններ և տեսություններ. Գոհար Շահնազարյան

Համառոտագիր

Ֆեմինիստական տեսությունները հիմնականում ի հայտ եկան որպես բողոք՝ մեյնսթրիմ սոցիալական գիտություններում գենդերային հիմնախնդիրների անտեսման դեմ: Ֆեմինիստական տարբեր տեսություններ տարբեր կերպով են անդրադառնում գենդերային անհավասարությանը և կնոջ ցածր սոցիալական կարգավիճակին: Այսպես, օրինակ, ազատական (լիբերալ) ֆեմինիզմի ներկայացուցիչները փորձում էին կանանց ավելի ցածր կարգավիճակը բացատրել կրթության անբավարարությամբ և ընտրության ազատության բացակայությամբ, որի արդյունքն էլ հանդիսանում է կանանց կախվածությունը տղամարդկանցից: Ըստ սոցիալ-ֆեմինիստների և մարքսիստական ֆեմինիզմի ներկայացուցիչների՝ կանանց սոցիալական կարգավիճակի փոփոխության համար միակ խոչընդոտող գործոնը մասնավոր սեփականությունն է և աշխատանքի բաժանումը՝ ըստ սեռային հատկանիշի, ինչը մասնավորապես բնորոշ է կապիտալիստական հասարակարգին: Ֆեմինիզմի՝ ինչպես տեսական բովանդակության, այնպես էլ սոցիալական ազդեցության առումով առավել վառ ազդեցիկ ուղղություն է հանդիսանում արմատական /ռադիկալ/ ֆեմինիզմը: Չնայած բարձրացրած կարևոր հարցերին՝ ֆեմինիստական բոլոր տեսությունները ենթարկվել են քննադատության և վերանայվել են առավել ժամանակակից մոտեցումներում:

Կենսագրական

Գոհար Շահնազարյանը Երևանի պետական համալսարանի գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի (www.yasu.am/gender) տնօրենն է և Հայաստանում Կանանց ռեսուրսային կենտրոն հասարակական կազմակերպության (www.womenofarmenia.org) համահիմնադիրն ու համատնօրենը (www.womenofarmenia.org): Ունի գիտությունների թեկնածուի կոչում սոցիոլոգիայի ոլորտում: Ներկայումս տկն. Շահնազարյանը ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ է և 2015-ի

սեպտեմբերից ԵՊՀ-ում մեկնարկած «Կանայք, առաջնորդություն և զարգացում» մագիստրոսական ծրագրի համակարգողն է: 2004-ին տկն. Շահնագարյանն Արիզոնայի պետական համալսարանի Հասարակայնության հետ կապերի դպրոցում այցելու հետազոտող էր: 2008, 2009 և 2011 թ.թ., յուրաքանչյուր տարի մեկ կիսամյակ, նա եղել է այցելու հետազոտող Բաց հասարակության ինստիտուտի կրթաթոշակով Բերքլիի համալսարանի Սլավոնական, արևելավրոպական և եվրասիական հետազոտությունների ինստիտուտում: Վերջին տասը տարիների ընթացքում տկն. Շահնագարյանը համակարգել է կանանց և գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ մի շարք խոշոր նախագծեր (օրինակ՝ կանանց առաջնորդության ծրագրեր, գենդերային հատկանիշով պայմանավորված բռնություն վերապրածների ուղղորդման մեխանիզմների մշակումը, կանանց իրավունքների մասին կրթական ծրագրեր, կանայք և խաղաղաշինություն, Հայաստանում ֆեմինիստական շարժման զարգացում և այլն) և մասնակցել է կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ տարբեր միջազգային, տարածաշրջանային և տեղական գիտաժողովների, դասընթացների և սեմինարների:

Ռեակցիոնիստական գաղափարախոսություններ. «հայեցի» կնոջ և «զինվորի մոր» կերտումը. Լարա Ահարոնյան

Համառոտագիր

Կներկայացնի կանանց իրավունքների ընդհանուր իրավիճակը Հայաստանում (հիմնական ոլորտները) և ֆեմինիստական մոտեցման ու ֆեմինիստական միջամտության մոդելը, որը «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի կողմից մշակվել է որպես շարժումների կազմակերպման մեթոդ: Կներկայացնի «հայեցի» կնոջ և «զինվորի մոր» կերտման հիմնախնդիրը Հայաստանում:

Կենսագրական

Լարա Ահարոնյանը ծնվել է 1972 թ. Բեյրութում և 1990-ական թվականներին Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում տեղափոխվել է Կանադա՝ Մոնրեալ, , որտեղ սովորել է հոգեբանություն և համեմատական ֆեմինիստական գրականություն:

Վերջին 14 տարիներին նա Հայաստանում է ապրում: 2003 - ին համահիմնադրել է «Կանանց ռեսուրսային կենտրոնը» Երևանում՝ մարզաբնակ կանանց հզորացնելու և հայ հասարակության մեջ հայրիշխանական նորմերին մարտահրավեր նետելու նպատակով: 2008-ին նա ստեղծեց Հայաստանում սեռական բռնություն վերապրածների առաջին ճգնաժամային կենտրոնը՝ այս հարցի շուրջ լուրջ լուրջ ու ամոթահարության մթնոլորտը փոխելու համար: Մինչ օրս այլ ակտիվիստների հետ նա պաշտպանում է ընտանեկան բռնության ենթարկվող կանանց իրավունքները և սատարում նրանց՝ արդարության հասնելու ճանապարհին: 2007 թվականից նաև աշխատում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության տարածաշրջանում ապրող կանանց հետ՝ նրանց ներգրավելով խաղաղության հաստատման գործընթացներում: 20-րդ դարա սկզբի կին գրողի և հասարակական ակտիվիստի կյանքի և աշխատանքի մասին պատմող «Զաբել Եսայան» փաստագրական ֆիլմի ռեժիսորներից մեկն է:

Կանանց արվեստն ընդդեմ ֆեմինիստական արվեստի. Տիպաբանությունները և հակասությունները Հայաստանի արվեստի պրակտիկաներում. Սուսաննա Գյուլամիրյան

Համառոտագիր

Կներկայացվեն գենդերային կոնֆլիկտի բազմազանության, ներհատուկ հակասությունների և գենդերային բախումների տիպային օրինակներ, որոնք արտահայտվել են խորհրդային և հետխորհրդային Հայաստանի կանանց արվեստում: Ֆեմինիստական քննախոսությամբ կոփտարկվի դեռևս ակտուալ՝ խորհրդահայ կին արվեստագետներ երևույթը, որոնք կտրված էին գենդերից ու նմանատիպ նկատառումներից և արմատ էին ձգել «դասական ակադեմիական դպրոցի» և «ազգային գեղարվեստի» ավանդույթներում, որպեսզի դառնային տղամարդ արվեստագետների «իրավացի միտումների» սոսկ լրացումը: Կանացի արվեստի շովինիստ-արական մեկնաբանությունը գերակայեց տարիներ և զանգվածայնորեն ամուր նստվածք թողեց խորհրդահայ մշակութային պատմագրության մեջ: Հետխորհրդային 1990-ականները մի ժամանակաշրջան էին, որ նշանավորեցին

հրաժարում մեծ սովետական պատումներից և առերեսվեցին Հայաստանի արվեստի դիսկուրսում և արդիական արվեստի գործունեության մեջ գերակայող մտքերի ավանդական ապարատի ապակառուցմանը: Դա կանանց արվեստում ֆեմինիստական խմբագրման և ֆեմինիստական հեղաշրջման ժամանակ էր:

Կենսագրական

Սուսաննա Գյուլամիրյանն արվեստի կուրատոր և քննադատ է, որն աշխատում է հայաստանյան և միջազգային ասպարեզներում: Նա համատեղ հիմնադրել է է «Արվեստի և մշակութային հետազոտությունների լաբորատորիա» (ACSL- www.acsl.am) հասարակական կազմակերպությունը և զբաղեցնում է վերջինիս նախագահի պաշտոնը: 2006-ից ի վեր Հայաստանի արվեստի քննադատների միջազգային ասոցիացիայի (AICA) անդամ է: Ավելի քան տասը տարի Սուսաննա Գյուլամիրյանը մշակութաբանության և գեղարվեստի ուսումնասիրությունների դասընթացներ է վարում Հայկական բաց համալսարանի գեղարվեստի բաժնում (Միջազգային կրթության ակադեմիա), ինչպես նաև գեղարվեստի ուսումնասիրություններ է դասավանդել Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողներին: Նա Նյու-Յորքի Նյու Սքուլ համալսարանի Արվեստի և քաղաքականության Վերա Լիսթ կենտրոնի կողմից մեկնարկած արվեստի և քաղաքականության բնագավառում բացառիկ նվաճումների՝ միջազգային բիենալների մրցանակաբաշխության խորհրդի անդամ է:

Սեռականության իրավական, կրոնական և սովորության կարգավորումները

Արևելահայաստանում. Զրաչյա Զակոբյան, Մարիամ Խալաթյան, Էդուարդ Դանիելյան

Համառոտագիր

Հասարակության զարգացման, երևույթների միջև եղած պատճառ-հետևանքային կապերի բացահայտումները հաճախ զարմանք են առաջացնում: Մի քանի պարզ լեզվաբանական հերթագայությունների մեջբերումը մեզ մեկ ակնթարթում կարող է փոխարկել, դուրս բերել եղած- իմացածի շրջանակներից, բացել ճանապարհի դեպի նոր

քննարկումներ և բացահայտումներ: Շատ ավելի մեծ է սոցիալական պատմության ուսումնասիրության տված ազդակն ու բացող հորիզոնները: Մեր ուսումնասիրության առարկան ամենատարբեր բացահայտումներով և նորանոր օրինաչափություններով լի մի ամբողջ դարաշրջանի պատմա- հետազոտական ակնարկ է՝ մի դարաշրջանի, որի ազդեցությունները և զարգացումներն այսօր էլ հստակ տեսանելի և շոշափելի են: Ուսումնասիրությունում փորձել ենք դիտարկել նույնասեռականության իրավական և սովորույթային վերահսկումը Արևելյան Հայաստանում՝ նոր ժամանակների (16-19 դ.դ.) պարսկական իրավունքի գրեթե 300 ամյա տիրապետության շրջանում, ինչպես նաև հասկանալ դրա հնարավոր ազդեցությունները հայկական մշակույթի և ընդունված բարոյական պատկերացումների վրա: Ելույթը շոշափում է երկու հիմնական թեմա՝ նույնասեռականության իրավական և սովորույթային վերահսկումը պարսկական իրավունքի ներքո և ժամանակի հոմոէրոտիզմն ու նույնասեռ կապերը պրակտիկայում:

Կենսագրականներ

Հրայր Հակոբյանը ծնվել է 1992 թ. դեկտեմբերի 5-ին Գյումրիում: 2009-ին ավարտել է Գյումրու պետական ակադեմիական հենակետային վարժարանը և ընդունվել Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության բակալավրիատ: 2013-ին, ստանալով իրանագետի որակավորում, զորակոչվել է Հայոց բանակ: 2015-ին սերժանտի կոչմամբ զորացրվել է պահեստազոր: Նույն տարում ընդունվել է ԵՊՀ Իրանի պատմա-բանասիրության մագիստրատուրա, որն էլ ավարտել է 2017-ին գերազանցության դիպլոմով: Մասնակցել է մի շարք վերապատրաստման ծրագրերի Իրանի Ալլամե Թաբաթաբայի և Փայամե Նուր համալսարաններում: Տիրապետում է անգլերեն, ռուսերեն, պարսկերեն լեզուներին: Ներկայումս աշխատում է Հայաստանում Եվրոպական դպրոցում, որպես ֆիզիկական կրթության ուսուցիչ և Ռիկա Գրուսի ընկերությունում, որպես հաճախորդների սպասարկման մենեջեր:

Մարիամ Խալաթյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետը, ստացել մագիստրոսի աստիճան սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն բաժ-

նում: Ունի հետազոտական աշխատանքների, մեդիա մոնիթորինգի փորձառություն: 2016-ից ներգրավված է Սոցիոսկոպ ՀԿ-ի տարբեր ծրագրերում: Իրականացրել է դաշտային և վերլուծական աշխատանքներ Հայաստանում ընտանեկան բռնության, ԼԳԲՏ համայնքի խնդիրների շուրջ: 2017-ից միացել է Սոցիոսկոպին որպես ծրագրերի ասիստենտ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում են միգրացիոն գործընթացներն ու խնդիրները, քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման խնդիրները Հայաստանում: Վերջին մեկ տարվա ընթացքում զբաղվում է միջնադարում Հայաստանում սեռականության կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Էդուարդ Դանիելյանը 2009թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի բաժինը: 2011 -ին ավարտել է Մոսկվայում մարդու իրավունքների միջազգային դպրոցը: Իրավապաշտպան գործունեությունը սկսել է «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ-ում, որտեղ աշխատել է 2009-2015թ.թ.: Կազմակերպությունում զբաղվել է քրեակատարողական հիմնարկների, հոգեբուժարանների ու դատարանների մշտադիտարկմամբ, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքի, խղճի և կրոնական դավանանքի ազատության իրավունքի ու խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի մշտադիտարկումներով: 2015-ից ի վեր աշխատում է «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ-ում: Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու է: Ավարտել է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետը: Դասավանդում է Երևանի պետական և Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարաններում: Զբաղվում է հետխորհրդային Հայաստանի հասարակական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Գիտական հետազոտությունների շրժագիծն ընդգրկում է նաև սոցիոլոգիական մեթոդաբանության համապատասխանության և սոցիալական ցանցերի որակական բնութագրիչների ուսումնասիրությունները:

Սեռականություն և «ազգային» սահման(ափակում) ներ. հավասարության հաստատման պրակտիկաները Հայաստանում և հակախտրականության օրենքը. Մամիկոն Հովսեփյան

Համառոտագիր

Սեռականության թեման մշտապես փակ է եղել հասարակության համար, նույնիսկ թևավոր խոսք է դարձել ԽՍՀՄ-ից մնացած՝ «սովետում սեքս չկար» արտահայտությունը: Սեռականության թեման մի շարք այլ հարող հարցերի հետ ևս տեղավորվել է ամոթի ինստիտուտում: Եվ ավելին, «սեռականություն» լայն և բազմաշերտ հասկացությունը՝ հասարակությունը նեղացնում և տեղավորում է դրա մեկ բաղադրիչի՝ սեռական հարաբերության համատեքստում: Ամոթի և արգելքի դրսևորումն ապահովելու համար հաճախ սեռականության մասին քննարկումը և այդ հարցերի բարձրաձայնումը դիտարկվում է որպես ազգային և ավանդական արժեքների հակապատկեր, և հայրենասիրության կեղծ քողի տակ թեման լռեցվում է՝ կարծես հասարակությունը զուրկ է սեռականությունից: Բայց անհրաժեշտության դեպքում այն կամ դրա բաղադրիչները կարող են օգտագործվել նույն ազգային և ավանդական կոնտեքստում: Օրինակ՝ կանանց ու տղամարդկանց անհավասարությունն արդարացնելու համար անձի սեռով պայմանավորված նախապաշարմունքները, գենդերային հիմքով բռնությունը և այլն:

Կենսագրական

Մամիկոն Հովսեփյանն իրավապաշտպան է և ԼԳԲՏ ակտիվիստ: Ոլորտում ներգրավված է 2002-ից, իսկ 2007-ին հիմնել է «Փինք Արմենիա» կազմակերպությունը, որն առաջատար ԼԳԲՏ կազմակերպություն է Հայաստանում և հանդիսանում է մի շարք տեղական ու միջազգային նշանավոր ցանցերի անդամ: Մամիկոնն այս տարի նաև ընտրվել է որպես «Հյուման ռայթս հաուս Երևան» իրավապաշտպան կազմակերպությունների միության նախագահ: Մասնագիտությամբ սոցիոլոգ է, սովորել է նաև մարդու իրավունքներ և ժողովրդավարություն:

2017-ին Լոնդոնում արժանացել է Բոբ Հեփիլի անվան հավասարության մրցանակի, 2018-ին Լոս Անջելեսում ստացել է

«Փոփոխություններ բերող» մրցանակը, իսկ Բեռլինում՝ «Սթոունվոլի հոգի» մրցանակը:

Սովորույթների փոխարկումն այսօր՝ միջամտությամբ ժամանակակից արվեստի, պերֆորմատիվ ակտիվիզմի և հարցադրող հետազոտությունների. Գայանե Շագոյան, Արմինե Հովհաննիսյան

Համառոտագիր


Ելույթը վերաբերելու է երեք նախագծերի՝ «Կարմիր խնձոր» (2005թ.) և «Սեքսուալ դաստիարակություն» (2006թ.) ինտերակտիվ/մասնակցային ինստալացիաներն ու «Ես այստեղ եմ՝ քաղաքում» վիդեո աշխատանքը (2008թ.): Այս ստեղծագործությունները կապված են գենդերային խնդիրների, սեռական դաստիարակության հետ, ինչպես նաև հարցադրում են կնոջ դերն ու նրա մարմնի ընկալումը հանրային տարածքում ու մասնավորապես՝ Հայաստանում: Ելույթիս առաջին հատվածում համառոտ կխոսեմ արվեստում այն ֆեմինիստական գաղափարների մասին, որոնք կարող են առնչվել իմ ստեղծագործական գործընթացին: Իսկ մյուս հատվածում կներկայացնեմ թե ինչպես վերոհիշյալ աշխատանքները քննում են այժմյան հայկական հասարակության կարծարատիպերի և նորմերի կառուցվածքները: Հաճախ որդեգրելով սուբվերսիվ ստեղծագործական ժեստեր՝ հարցաքննում եմ դրանց ներկայացուցչականության մեխանիզմները և որպես վերջնական արդյունք, առաջարկում մի նոր հարաբերություն ու փոխգործունեություն իրականության և հորինվածքի, «տեսանելիի և անտեսանելիի» միջև՝ միևնույն ժամանակ օգտագործելով նույն նորմատիվ պատկերներին, պատմություններին և ինքնություններին պատկանող գործիքները:

Կենսագրականներ

Գայանե Շագոյանը Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող է, ազգագրագետ, մշակութային մարդաբան: Պատմական գիտությունների թեկնածու է: Հետազոտությունների ոլորտներն են ավանդական և ժամանակակից ծիսակարգը, քաղաքի մարդաբանությունը, վիզուալ մարդաբանությունը, աղետի մարդաբանությունը, խորհրդային շրջանի մարդաբանական

ուսումնասիրությունը: Հայաստանի անկախության շրջանի արվեստում կիրառվող ֆեմինիստական ռազմավարությունները:

Արմինե Հովհաննիսյանն արվեստագետ է, ապրում և ստեղծագործում է Երևանում: Ավարտել է Հայկական բաց համալսարանի կերպարվեստի ֆակուլտետը (2004թ.): 2003-2017թ.թ. աշխատել է Գեղագիտության ազգային կենտրոնի կերպարվեստի և դեկ. կիր. արվեստի ստուդիա-քոլեջում որպես մանկավարժ, որտեղ էլ երկարատև համագործակցել է արվեստագետ Սամվել Բաղդասարյանի հետ: 2007-ին «Ֆիլմ և կերպարվեստ» բնագավառում Արմինեն արժանացել է Հայաստանի Հանրապետության Նախագահի Երիտասարդական մրցանակին: Նրա ստեղծագործությունները ներառում են տարբեր մեդիաներ՝ ինտերակտիվ ինստալացիա, նկարչություն, վիդեո արվեստ և լուսանկարչություն: Հիմնական աշխատանքային մեթոդն ստանում է համագործակցության ձև՝ լինի դա մեկ այլ արվեստագետի հետ, թե ներգրավվածություն տարբեր սոցիալական շերտերում: Հիմնական թեմաներն են գենդերային խնդիրները, խորհրդային անցյալի հետ գործ ունեցող ներկա պատմական և մշակութային մնացորդները և կերպարվեստի ու կրթության կապը:



Հայերի Բոլ հիմնադրամ
Հարավային Կովկասի գրասենյակ

Նալբանդյան 50, քն 6, Երևան,
Հայաստան

+374 10 583234

Olya.azatyan@am.boell.org
Susanna.Khachatryan@am.boell.org

www.ge.boell.org